



Հայկական գիտահետազոտական հանգույց  
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:


Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

260 279 1461  
461  
ՄԱՆԿԱՎԱՐԺԻ ԳՐԱԴԱՐԱՆ

Ի ԳՆԱՏՑԵՎ

ԳԱՎԱՌԱԳԻՏՈՒԹՈՒՆՆ  
ՈՒ ԴՊՐՈՑԸ



Պետական Հրատարակչություն. Յերեկան—1928



ՄԱՆԿԱՎԱՐԺԻ ԳՐԱԴԱՐԱՆ

ԻԳՆԱՏՅԵՎ

ԳԱՎԱՌԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆ  
ՈՒ ԴՊՐՈՑԸ



Պետկան Հրատարակչություն. Յերեվան—1928

№ 675

Գրասեղան № 506 (բ)

Տիրած 3060

---

Պետերսոնի սուսջին տպարանի վաղարշապատում

# ԳԱՎԱՌԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԳՊՐՈՑՔ

## I

Ներկա աշխատութեան նպատակը գալառագիտութեան ասպարիզում գիտական կամ մեթոդական գյուտերի մասին տեղեկութեան տալը չէ, այլ գալառագիտական աշխատանքը նոր դպրոցի, մամանակակից նոր սերնդի դաստիարակութեան կարիքներին համակերպելու գործում հենակետեր նշել, վոր ՊԳԽ-ի նոր ծրագրով աշխատանք վարող ուսուցչի համար չափազանց կարևոր գործ է: Ներկայումս ել լավ հայտնի չն, նոր ծրագրերի համաձայն, աշխատանքի դպրոցի գործն, ըստ իր հիմնական բովանդակութեան, տեղական նշուքով պիտի լրացնել: Նոր դպրոցի ակտիվ-աշխատավորական մեթոդն իր իրագործման համար կոնկրետ նշուք է պահանջում: Այս մեթոդի միջոցով դպրոցն իր ամբողջ կուլիկտիվով մասնակից է դառնում տեղի տնտեսական ու կուլտուրական կյանքին: Աշխատանքի դպրոցը կյանքի դպրոց է. նրա համար վողջ շրջապատը հետազոտման, ուսումնասիրութեան և ուժեր սպասարկելու մի ընդարձակ ասպարեզ է: Աշխատանքի դպրոցի այս բոլոր առանձնահատկութեաններն անխուսափելիորեն թերազրում են նրան՝ գալառագիտական աշխատանքում գործոն մասնակցութեան ունենալը:

Աշխատանքի դպրոցն իր չերեսը դարձնում է գալառագիտութեան կոպմբ, գոյութեան ունեցող գալա-

ուսուցիչական միութիւններէ, փաստորէն տեղի ունեցող դավաճանական աշխատանքի կողմը: Գաղութացի հասարակական դավաճանականութեան ոգնութեան կարիքն է զգուճ: Պետք է վարժակի ասել, վոր դավաճանականութեան վերաբերմամբ ունեցած դպրոցական խնդիրներում է կատարվող դավաճանական աշխատանքում, ընդհանրապէս, միատեսակ հաջեցակետեր, կոնտակտ դոցութիւն չունեն. մինչև իսկ կարելի չէ չենթադրել, վոր դուրս դավաճանական աշխատանքի է դպրոցական դավաճանականութեան մեջ չի կարող լրիվ ամբողջութիւն լինել: Այս տեսակետից՝ շահեկան է ուշադրութեան առնել Արխանգելսկու կարծիքը (տ. Գաղութանականութիւն. Մամարաչի շրջան), թե՛ «ցանկալի չէ իրարից տարբերել գիտական աշխատանքի դավաճանական մեթոդները, ալ ինքն՝ վորոշ չերկրամասի վրա նշուժեր ժողովելու և ուսումնասիրելու մեթոդը, գիղակտիկական մեթոդները, դպրոցական աշխատանքի կազմակերպման մեթոդները, վորոնք տարբեր են՝ նաչելով լերերի սանդակներ հասակին, դպրոցի միջոցներին և ուժերին: Ահա թէ ինչու չէ անխուսափելի դառնում դպրոցի դավաճանական աշխատանքի և, ընդհանրապէս, դավաճանական աշխատանքի փոխհարաբերութիւններին խնդիրը: Հետու լինելով այս հարցը լուծելու մտքից և չելակետ ունենալով աշխատանքի դպրոցի հիմնական կանոնները, փորձենք պատասխանել այն հարցին, թե ինչպիսի դավաճանականութիւն պիտի լինի դպրոցում՝ անկախ գիտական դավաճանական աշխատանքի մեթոդիկայից:

Մենք գիտենք, վոր անցյալի դավաճանական աշխատանքում, վոր մինչև որս ել համարչու գետ բոլոր-

բովին մոռացված չե, տիրապետողը գլխավորապես պատմա-հնագիտական կամ ազգագրական ուղղութիւնն էր: Մենք գիտենք, վոր բնութիւնը—տեղի շրջանի այս ուժերի ու հարստութեան աղբյուրը, կամ բոլորովին չեք ուսումնասիրվում, կամ, չեթե ուսումնասիրվում ել եր, դա կատարվում եր բարդ ակադեմիկ ճանապարհով, ձգձգված, տեղական ազգարնակութեանն անհասկանալի, նրան ու դպրոցին անմատչելի ճանապարհով: Աշխատանքի մեթոդն, ընդհանրապես, կոլլեկցիաներ և նյութեր ժողովելն էր, աշխատանքի նպատակը, սովորաբար, տեղական դավառագիտական թանգարան կազմելն էր: Ձի կարելի տեսլ, թե այս տիպի աշխատանքը բանի պեսք չեք, թե այդ նյութն անարժեք էր. բաց մեր տեսակետից մոտենալով, անհրաժեշտ և ընդգծել, վոր անցյալի, մասամբ նուշնիսկ մեր որերի այսպիսի գավառագիտական աշխատանքն իրական կյանքից կարված էր, վորովհետև նրա հիմքը տեղի կենսական պահանջները չեղին կազմում, վորովհետև նա տվյալ շրջանի կյանքի հերթական ցավոտ խնդիրները չեք ուսումնասիրում, տեղական կյանքը բարելավելու խնդիրները լուծելով չեք զբաղվում: Հետ-հոկտեմբերյան կյանքի նոր պայմաններում գավառագիտութեան ընազգավառում այդպես աշխատել, ընդհանրապես, անկարելի չե, հատկապես այդ անկարելի չե դպրոցում. այդպես աշխատել չի կարող նոր, չերիտասարդ սերունդը: Ժամանակակից չերիտասարդութիւնն իր աշխատանքը պիտի նամաձայնեցնի Վ. Ի. Լեճիճի խոսքերից, թե՛ «այն սերունդը, վոր ներկայումս 15 տարեկան է, իր ուսուցման բոլոր խնդիրներն աջակես պիտի դնի, վոր ամեն որ, վոր գլուղում կամ քաղաքում ուղում է լինի, չե-

բիտասարդութիւնը կարողանա գործնականորեն լուծել  
ընդհանուր աշխատանքի վերեւ խնդիր՝ թեկուզ փոք-  
րագուցնր, ամենից հասարակը լինի այդ»:

Առաջ բերած նկատառումները ցույց են տալիս,  
վոր անհրաժեշտ և վերանայիլ դաւաճողիտական  
աշխատանքների ծրագիրն ու նրա կիրառման մե-  
թոդները՝ թե ընդհանուր առմամբ և թե մասնա-  
վորապէս բնութիւնն ու ստումնասիրելու բնագալառում:  
Ի՞նչպիսի գալառապիտութիւն պիտի ունենա դրպ-  
րոցը: Յեթե մենք վերցնենք մի շտրք գալառապի-  
տական հաշիտալութիւններ, հեշտութիւնը կհամոզ-  
վենք, թե ինչ մեծ բազմապանութիւն կա դրանց մեջ.  
այդտեղ չուրաքանչյուր սիրտդի, չուրաքանչյուր մաս-  
նագիտի աշխատանք տարբեր ուղի ունի. նրանց աշ-  
խատանքը ծրագրլամ չե, վորտլհետե այդ աշխատանքը  
կախում ունի մասնագիտից և նրա անհատական հա-  
կումներից: Ի՞նչ խոսք, վոր աշխատանքի դպրոցի հա-  
մար իրերի նման դրութիւն անթուլլատրելի չե: Դրպ-  
րոցական չուրաքանչյուր աշխատանք, ինչպէս նաե  
գալառապիտական, գալառապիտական նլութի հաշիա-  
ռում, կամալական ու ցաքուցրիլ բնութլ չպիտի կրեն  
և չեն ել կարող այդպէս լինել: Այդ աշխատանքում  
պիտի դրսետրլի իրերի և պրոցեսսի ալն ուալ կապը,  
վոր իրականում գոլութիւն ունի: Դպրոցի ուղենիշը  
շրջապատի կլանքն և հասարակական կլանքի առանց-  
քը մարդկանց աշխատանքալին գործունեկութիւնն և,  
հասարակական արտադրողականութիւն պրոցեսսը.  
բնագիտական պիտելիքներն ել սկիզբն են առնում ար-  
տադրութից: Այս հիման վրա գալառապիտական աշ-  
խատանքի ժամանակ կարելի չե, և պետք և, արտա-

դրանքը համարել աֆն առանցքը, վոր համախմբում է ալլ աշխատանքի տարրեր կողմերը, ուստի և ալլ տեսակետից քննվող գավառագիտութչունն ևլ կարելի չե ընտրուշի «արտադրողական գավառագիտութչուն» անունով: Տեղական շրջանի վրա պիտի նաչել վոշ թե գիտնականի աչքով, վոր սովորաբար վերլուծման հակում ունի կամ սիրում և փակվել իր նեղ մասնագիտութչան շրջանակում, առավել ևս՝ վոշ հնագետի, վոշ հին տիպի գավառագետի աչքով, վորոնք ժամանակակից չեսուն կշանքի չերևույթների մոտով անցնելու հակում միայն ունեն, ալլ հեղափոխական նոր մարդու աչքով, վորը սվյալ շրջանում կամ գավառում թագնված հարավորութչուններ և փնտում, ուր կարողանա իր ուժերը գործադրել: Այստեղից մենք անցնում ենք գավառագիտական աշխատանքը կառուցելու նկատառումներին:

Ինչպես չերևում և, գավառի ուսումնասիրութչունը ժամանակակից դպրոցում չի կարող բավականանալ միայն վորոշ փաստեր մատնանշելով, կոլլեկցիաներ ժողովելով, թանգարան կազմակերպելով: Գավառագիտութչունը պիտի վորոշ ջանք թափի կշանքի համար: Իրոք, գավառագիտութչունը պիտի հասարակական կիրառական կալուսութչուն ունենա. նա պիտի աշխատի դպրոցում ստացած գիտելիքներն անմիջապես գործնականում կիրառել, ինչպես նաև տեղական տնտեսութչան ազդիոնալիզացիայի աշխատանքներում, մեխորացիայի կազմակերպման շրջանի պոտենցիալ հարստութչուններն ոգտագործելու կամ սրա նման ձեռնարկութչունների մեջ:

Այս իմաստով վերցրած՝ գավառագիտութչունը դըպրոցական հասարակական աշխատանքի մի մասն և: Այս

բոլոր ջանքերը նրա համար են, վոր բարձրացնեն գա-  
վառի արտադրողական ուժերը: Այս ցույց և տալիս,  
վոր գավառագիտական գործը աշխատանքի վորոշ պրո-  
ցեսս և, վոր իրանում և արտադրողական աշխատան-  
քում, նրանից և սկիզբն առնում, նրանով վերջանում  
և աշխատանքային վորոշ նպատակներ ունի: Այս հան-  
դամանքն աշխատանքի դպրոցը գավառագիտութեանն  
ավելի չե մոտեցնում: Այլ կերպ չի չի կարող լինել:  
Յեթե Լենինն ասել և, թե հասարակ գրագիտութեանն  
խիչ պիտի բարձրացնի քաղաքակրթութեանը, թե «պի-  
տի հասնել այն որին, վոր գյուղացին կարողանա կար-  
գալ-գրելն իր տնտեսութեան և իր պետութեան բարե-  
լավման գործին ծառայեցնել», ուրեմն պարզ և, վոր  
գավառագիտական աշխատանքը, վոր ուսումնասիրում  
և տեղական տնտեսութեանը, նիստուկացը, և այլն, չի  
կարող չձգտել՝ ստացած հետևանքները ծառայեցնելու  
իր տնտեսութեան և իր վիճակի բարելավման գործին.  
հասարակական-կիրառման կաշունացման գաղափարը  
գավառագիտական աշխատանքի ասպարիզում հիմնա-  
կան ու ղեկավարող, կրթող ու դաստիարակող գաղա-  
փար և, վորից ոգտվելով, ապագա հասարակութեան  
ուժեղ ու հուժկու կառուցողին պետք և պատրաստել:

## II

Արտադրողական գավառագիտութեան մեր բնորո-  
շումից պարզվում և, վոր աշխատանքի առանցքը տե-  
ղական արտադրութեան ուսումնասիրութեանն և: Այս  
ուսումնասիրութեանը բաժանվում և չերկու գլխավոր  
ճյուղերի, չերկու մասնագիտութեանների՝ բնական-գի-  
տական և հասարակական, վորոնց ողակը ինքն ար-

տաղրութեան պրոցեսսն եւ Մովորաբար, գավառագի-  
տական աշխատանքի ծրագիր կառուցելիս, գավառագի-  
տական վորևե ժողովածու կազմելիս կամ տեղի շրջանը  
նկարագրելիս, մենք սովորութեուն ունենք բնութեունը  
վորպես հիմք ընդունել. իսկ Ֆոնի վրա, հետագա գլուխ-  
ներում, մարդու գործունեյութեունն եւ ծավալվում: Մո-  
վորաբար, բնապատմական տեսութեունը նախադրյալ  
եւ նաև վորևե գավառի գուտ տնտեսագիտական բնույթ  
կրող նկարագրական աշխատանքների, որիննակ՝ աչգ-  
պես են Մոսկվայի նահանգի Դիմիտրովսկի և ուրիշ  
գավառների, Սամարայի շրջանի նկարագիրները և այլն:  
Աշխատանքի և հորինվածքի այս ձևը հենց իր հիմքում  
ուղիղ չե, վորովհետև յենթադրել և տալիս, թե մարդը  
կարծես միայն բնութեունից կախում ունի, իսկ ինքը  
բնութեան վրա չի աղդում: Յեթե այսպես մտածելն  
ուղիղ և նախնական կուլտուրայի առանձին շրջանների  
վերաբերմամբ, մեր որերում այդ նշանակութեուն կա-  
րող և ունենալ միայն հեռավոր և բնութեան դաժան  
պայմանների շնորհիվ ամայի մնացած տեղերի վերա-  
բերմամբ: Այս դեպքում ստացվում և վոչ թե գավա-  
ռագիտական ուսումնասիրութեան յերկու որջեկտների  
ներքին կապ, այլ դրանց այնպիսի հաջորդականու-  
թեուն, վոր գուցութեուն ուներ աշխարհագրութեան հին  
դասագրքում: Աշխարհագրութեան ասպարիզում այս  
հարցի մտտին մենք արդեն հետաքրքիր տեսակետ ու-  
նենք, վոր առանձնապես սեյեֆ արտահայտված և Զ.  
Մորրաբինի «Տիեզերքի համաշխարհային պատմա-տըն-  
տեսական աշխարհագրութեան նկարագիրը» գրքում:  
Մորրաբինի ասելով՝ չեթե աշխարհագրական գործոն-  
ները վերցնենք ինքնին, մարդկանց հարաբերութեուն-

նից դուրս, այդ դեպքում նրանք ժամանակագրական շատ մեծ շրջանների ընթացքում մարդուս մշտական ու անփոփոխ կիթվան: Բայց բանն էլ հենց այն է, Վոր նրանք հարստփոփոխ կերևան, չի՞թէ մտանանք մարդկության հասարակական և անասապիտական զարգացման վրա ունեցած ազդեցություն տեսակետից, տարրեր ժամանակաշրջաններում՝ նույնը մարդկային հասարակությունների վիճակին: «Մարդկության զարգացման տարրեր զարաշրջաններում դեր խաղացող միևնույն գործոնն աննպաստ վիճակից կարող է նույնաստիպ գտնալ, և ընդհակառակը»: Ահա թե ինչն պիտի խոսել միայն մարդու և նրան շրջապատող բնությունն փոխազդեցությունների, այսինքն՝ նրա շրջապատի մասին: Սորբարինի դերագանցուն հետաքրքիր սրինակները չերեք կարգի չեն—Յեզիպատար և անհատը, Ամերիկայի և չերկու սվիկանտաների փոխազդեցությունները, Անգլիայի գերբը Յեվրոպայի հյուսիս-արևմուտքում: Սկզբում անապատն էր, վոր ստար ցեղերի հարձակումներից պաշտպանեց Յեզիպատար և հնարախորություն սովոր նրա քաղաքակրթություն զարգանալուն ու ծողեկուն: Բայց այդ քաղաքակրթությունը, վոր մյուս աշխարհներից բաժանված էր հենց այդ անապատով, շատով քարացավ, վասկրացավ ու անշարժացավ: Քաղաքակրթություն այս չերկրորդ շրջանում անապատն ուղղակի աշխարհագրական վնասակար գործոն հանդիսացավ: Հարցի սվելի մանրամասնություններով հետաքրքրվողներին բնագիրը մատնանշելով, կարող ենք ավելացնել, վոր մեր որերում ևս կարելի չէ այդ տիպի բողմաթիվ պատմա-աշխարհագրական հակասություններ ցույց տալ. այսպես՝ թափառական ցեղերի

ասպատակութիւնների ժամանակ անտառաչին մաս-  
սիֆիների պաշտպանողական դերը և հետագա պատմա-  
կան շրջաններում նույն աչդ մասսիֆների դերը անտա-  
ռաբնակների աշխարհից կտրված լինելու և հետամնա-  
ցութեան մեջ. անապատի կլանքը և նրա բնական հա-  
րստութիւնների շահագործումը թափառական ցեղերի  
տիրապետութեան շրջանում և այժմ մեր տափարակի  
վրայի մեծ տարածութիւնների նշանակութիւնը պա-  
տերազմի և խաղաղութեան ժամանակ և այլն, և այլն:  
Մեր բոլոր ասածներից պարզ չերևում և, վոր բոլոր  
թե աշխարհագրական, և թե գավառագիտական չերե-  
վութիւններն՝ ինչպես բնութեան, այնպես և անտեսագի-  
տական և կուլտուրական, պիտի ուսումնասիրել իրար  
հետ փոխադարձորեն կապակցված վիճակում. իսկ դրա  
համար կենտրոնը պիտի լինի այն, վոր միացնում և  
ուսումնասիրութեան տարբեր բնագավառները. այդպիսի  
շաղկապ, կրկնում ենք, մարդը և նրա աշխատանքի ու  
արտադրողական գործունեցութիւնն և: Մարդը և նրա  
աշխատանքի գործունեցութիւնը կենտրոն ընդունելով,  
գավառագիտութեան, ինչպես նաև ՊԳՆ ծրագրի ցուցակ-  
ներում աշխատանքի բնականորեն իրարից տարբեր չեր-  
կու ճշուդավորումներ կստանանք— 1. մարդու կլանքի և  
աշխատանքի բնական պայմանների ուսումնասիրու-  
թիւն. 2. մարդու կլանքի և աշխատանքի հասարակա-  
կան պայմանների ուսումնասիրութիւն: Այնուամենայ-  
նիվ, այս չերկու ճշուդերն իրար հետ շաղկապված են վոչ  
միայն իրենց հիմքում, բնում, այլև ուրիշ շատ տեղերում  
են ձուլվում. այնպես վոր հիշեցնում են ավիլի շուտ ցան-  
ցի չերկու հիմնական թեյեր՝ իրար հետ անբաժան կերպով  
հլուսված, վոր եչապես անկարելի չե իրարից բաժանել:

Թեպետ բնութիւնն և հասարակութիւնն ուսումնասիրութիւննը կարող են կատարել զանազան մարդիկ և տարբեր ժամանակներում, այնուամենայնիւ, նրանք կատարվում են տեսողութիւնն նույն անկշունով և, վերջիվերջո, վորոշ չափով մի ամբողջութիւնն են ներկայացնում, վորին կարելի չէ սիմետրիկ առագրող օկան գազ-ռագիտութիւնն անունը տալ, այս կոչումի մեջ պլաննաչափ ու կազմակերպված գավառագիտական աշխատանքի հիմնական գծերը դնելով: Կարծում ենք՝ այսպես պիտի բացատրել վոչ միայն դրպրոցական գավառագիտական աշխատանքը, այլև գավառագիտական աշխատանքն ընդհանրապես:

Աշխատանքի դպրոցի դպրոցական ծրագիրը կոմպլեքսով և կառուցվում: Այս հարցի մեթոդական մշակման խնդրում մենք շատ բան ենք արել, ամենից առաջ՝ հենց այն, վոր բոլորովին վորոշակի կերպով պարզվել և, թե աշխատանքի դպրոցը չի կարող մտացածին կոմպլեքսներ տալ, չի կարող պատահական առարկաների, պատահական մտքերի շուրջը կառուցվել: Կոմպլեքսները պետք և բնական կերպով բոլորին տեղի աշխատանքային կյանքի յերևույթներից, իսկ այս յերևույթները գերազանցորեն կախված են տարվա յեղանակից (սեզոն) և տվյալ տեղի բնական և հասարակական առանձնահատկութիւններից: Քանի վոր այս այսպես և, պարզ և ուրեմն, վոր այս ձևով հասկացված գավառագիտութիւննն էլ մեծ չափով կոզնի դպրոցին՝ կոմպլեքսը կառուցելիս համադրութիւնն (սինթեզ) միջոցով մի ընդհանուր, ներքուստ ամուր շողկապված պատկեր ստեղծել՝ զանազան գիտական դիսցիպլիններին վերաբերող յերևույթների ուսումնասիր-

յուեթյունից (հող, բույսեր, պարապմունք, կենցաղ, հասարակական սանիտարիա և այլն)։ Այս հանգամանքն իր վրա դարձրեց մի շարք մանկավարժների ուշադրութունը, վերոնք այն միտքն առաջ քաշեցին, թե աշխատանքային դպրոցի գործը դառնում, պտտում և գավառագիտական աշխատանքի շուրջը, թե գավառագիտութունը դպրոցական աշխատանքի առանցքը, կենտրոնն է։ Այս տեսակետն առանձնապես աչքի չե ընկնում Լենինգրադի մանկավարժներից շատերի աշխատություններում։ Որինակ՝ Ջենո-Լիտովսկին՝ «Նոր դպրոցը գլուղում» վերնագիրը կրող լենինգրադյան լավագույն հավաքածուներից մեկում գետեզված իր հողածում գրում է. «Տեղական նյութը սերտ կերպով կկապի, կմիացնի դպրոցում ներկայումս գոյութուն ունեցող բոլոր առարկաները, նրանցից մի կոմպլեքս կստեղծի։ Այսպիսով, գավառագիտութունը հնարավոր կզարձնի իրականացնելու այն կոմպլեքսային մեթոդը, վերի մասին այնքան շատ ու այնքան վաղուց խոսում ու չերագում են մանկավարժները»։ Թվում է, թե դժվար կամ անկարելի չե միացնել նյութը բարձր խմբակներում, ուր ավելի հեռավոր, անմիջական գիտողության տեսածրից դուրս նյութ է ուսումնասիրվում։ Վեր մեր ակնարկը հիմք ունի, չերևում է վերն առաջ բերած պարբերությանը մի վտքը հետո հաջորդող հետևյալ ֆրագից. «Ամեն մի գլուղական դպրոցի սպառնում է համաշխարհային մասշտաբի վերածվելու հանգամանքը, իր գավառային չափը կորցնելու վտանգը։ Այդպիսի դպրոցը կկորցնի իր տեղական գավառային նշանակութունը, այսինքն՝ նոր դպրոցի իմաստն ու նպատակը»։ Այստեղ գավառագիտական հափշտակութուն

ենք տեսնում մենք, միայն թե կարելի լինի ազատվել արտադրողական տեսակետից, վորի հետքն անգամ չկա հեղինակի առաջագրած ընդարձակ ծրագրում: Հիմնովին սխալ է այս: Վորովհետև այսպիսի դեպքերում արտադրությունն ընդհանրապես աչքից վրիպում է, ուստի ստանում ենք ակադեմիկ գավառագիտություն, բնության և գավառի ուսումնասիրություն՝ հենց այնպես—ինքն իր համար, գիտությունը գիտություն համար: Հարկ չկա ասելու, թե գավառագիտական աշխատանքի այսպիսի մտեցումը վորքան է ազավագում այն հիմնական գաղափարները, վորոնք ընդհանրապես աշխատանքի դպրոցի կառուցվածքի հիմքն են կազմում:

Ուրիշ մեթոդիստներ գավառագիտություն հասկացողությունն ընդարձակում, դարձնում են այն ամենի ուսումնասիրություն, ինչ վոր շրջապատում է մեզ. նրանք գավառագիտության մեջ են անում նույնիսկ յերկնքի, տեսակարար կշռի ուսումնասիրությունը (տես Խիտրովու. Գավառագիտությունը դպրոցում) և այլն: Այս ձևով շրջապատի մասին մեր ամբողջ գիտելիքները կարելի չեն ներառել յերկու գիտությունների—գավառագիտության և հողագիտության մեջ: Պարզ է, վոր խնդրի այսպիսի կառուցումը կատարյալ անհեթեթություն է, իսկ դպրոցի համար իսպառ ավելորդ՝ իբրև պատահական ու առաձգական վորականիշի վրա հիմնված մի բան:

Յերբ գավառագիտությունը դնում են դպրոցական աշխատանքի հիմքում, այդ դեպքում ուշագրություն են դարձնում հենց նրա համադրողական հատկանիշին, այն հանգամանքի վրա, վոր նոր դպրոցն

աչքի չե ընկնում մշտական, աստիճանաբար համադրող աշխատանքի սկզբունքի կիրառմամբ, վորպեսզի կարողանա ամբողջացած դարդացում տալ ուսանողութեանը: Բայց պիտի նկատել, վոր միայն գավառապետութեանը չե, վոր կարող և նպատակ դպրոցի համադրողական աշխատանքին, այլ վորոշ միութեան ներկայացնող ամեն տեսակ արտագրուչի ուսումնասիրութեան, վոր իր հերթին ներառում և գիտութեան խիստ տարբեր ճշտղերի տարերքը՝ վորոշ չափով փոխադարձաբար կապակցված: Նույնը կարելի չե ասել մարդկանց աշխատանքային գործունեութեան մասին, վոր իր մեջ և առնում տարբեր արտագրուչներ, վոր հանդես և գալիս իբրև հասարակական արտագրուչ՝ այս բառի լայն իմաստով: Մեր տեսակետից՝ աշխատանքի դպրոցում գավառագիտութեանը չե, վոր դպրոցական աշխատանքի հիմքն և կազմում, և նա չե աշխատանքի նպատակը: Աշխատանքի հիմքը տեղական արտագրուչի, տեղական արտագրողական կցանքի ուսումնասիրութեանն և Դպրոցական աշխատանքում մեր չելակեան և արտագրուչը, նրանով ել, նրա համադրական պատկերով ել վերջացնում ենք աշխատանքը: Դպրոցական աշխատանքի այդ պրոցեսում արտագրողական գավառագիտութեանը մեզ շատ և ոգնում: Ուսումնասիրութեան նպատակը միայն մեր գավառը ճանաչելը չե, այլ մարդկանց աշխատանքային գործունեութեանը ճանաչելը՝ լայն մասշտաբով (պետական, համաշխարհային), ինչպես նաև պատմական կարվածքով (разрез):

Մրանից հետևում և, վոր գավառագիտութեան դերը դպրոցում վոչ թե տանցքի դեր և, այլ սղա-

սարկողի մի դեր: Գլխապես մենք գավառագիտութ-  
յունից չենք անցնում արտադրողականութեան ու-  
սումնասիրութեան՝ իբրև առաջինի մի մասի, այլ ընդ-  
հակառակն՝ աշխատանքն ու արտադրութիւն ուսումնա-  
սիրելիս, ոգավում ենք գավառագիտութեանից—վոր-  
պես աշխատանքի հարմար մեթոդից, իբրև լերեխանե-  
րի համար աշխատանքի հարմար հիմքից—լեթև միայն  
այդ աշխատանքը կանոնավոր և կազմակերպված, աչա-  
կինքն աստիճանաբար մոտիկից հեռվին անցնելու  
կարգը պահպանված և: Գլխապես մենք կանոն չենք  
առնում գավառագիտութեան վրա, այլ անմիջապես մեր  
ուսումնասիրութեանն ընդարձակում, հասցնում ենք  
ավելի խոշոր չափի, մինչև իսկ արտադրողական փոխ-  
հարաբերութեանների ուսումնասիրութեանը՝ համապե-  
տական, հետո նաև համաշխարհային տնտեսութեան  
մեջ: Այսպիսով, գավառագիտութեանը գլխապես աշ-  
խատանքում ուղեկից և հանդիսանում այն չափով, վոր-  
չափ նա հարկավոր և այդ աշխատանքին՝ նրա զար-  
գացման վորոշ աստիճաններում: Գլխապես աշխա-  
տանքում գավառագիտութեան դերը ընտով սպառող,  
վերջնական չէ. նույնիսկ այն տարիներում, լերը նա  
գլխապես համարյա տիրապետող և, ինչպես՝ ուսուց-  
ման 3-րդ տարում: Գլխապես աշխատանքի անձնական առող-  
ջարանութեանը, ողի բազմադրութեանը, երկարակա-  
նութեան մասին դիտելիքների հիմունքները և 3-րդ  
տարվա այլ նման հարցեր ընտով գավառագիտական  
չեն: Բայց նրանք իսպառ կտրված ևլ չեն այս տար-  
վա ընդհանուր կոմպլեքսային աշխատանքից՝ վորքան  
նրանք հիմնված են տեղական արտադրողականու-  
թեանը, տեղական աշխատանքային գործունեութեանն



պետական ծրագրված աշխատանքի մի մասը, վոր հաճախ կարող և կապված լինել հարչութրավոր իրարիմ տարրեր թեկերի և փոխհարաբերութլւանների հետ: Մրա շնորհիվ տանելի մասածիրը, վոր սկզբում արհեստական կերպով սահմանափակված էր գաղառագիտական աշխատանքի նեղ շրջանակներով, այնուհետև արտագրութալին մոտեցման շնորհիվ լաչնանում, հասնում և մինչև խոշորագուչն հափի տնտեսական հարաբերութլւանների, մինչև աշխատանքի և համաշխարհալին աշխատավորութլւան միջև չեղած կապի ըմբռնումին:

Քինչ և պատահել, վոր առաջին աստիճանի դպրոցի ուսուցիչներից շատերը շվարած հարց են տվել, թե ՊԳՍ-ի ծրագրի կենտրոնը ինչն է չե «աշխատանքը» կազմում: Ինչպես պիտի հասկանալ աշխատանքը դպրոցական ծրագրում, ինչպես պիտի իրագործել ծրագրի այս մասը, վոր աչնքան կարևոր և համարվում: Աշխատանքալին հիմունքների վրա գրված գաղառագիտութլւանը մարդու կյանքի մեջ կենտրոնական տեղ ունեցող աշխատանքի մասին զրտելի և սեալ հատկացողութլւան պիտի տա:

Գաղառագետը տեղի աշխատանքը պիտի ուսումնասիրի տարրեր տեսակետներից.— տեխնիկական, աշխատանքի կենցաղալին պաչմանների, նրանց կազմակերպման ձևերի, ինչպես նաև նրանց եփոլլուցիալի տեսակետից: Աշխատանքի ձևերը չենթակա չեն եփոլլուցիալի, և աչգ մի կարևորագուչն պաչման և, վոր չի կարելի անտեսել, վորտվհետև մեր նպատակն ավելի շատ զինամիկական և, քան թե սոտաթիկ: Աշխատանքի ձևերը գորգանում, կատարերագործվում են թե վերից, թե

վարից ներդարձող պատճառների ազդեցութեան տակ՝  
Վարից առաջացող եվոլյուցիայի ընթացքում մենք գործ  
ունենք տեղական արտադրողականութեան, նորմուծու-  
թեանների մի շարք վորոնումների հետ, վորոնք մասշե-  
լի ու շահեկան են տվյալ պայմաններին: Այդ վորոնում-  
ները գրական փոփոխութեանն էր են նշում, վորոնք  
թուլլատրելի չեն տվյալ տեղի տնտեսական կառուցված-  
քի տեսակետից: Աշխատանքը վերից եվոլյուցիայի չեն-  
թարկելը տեղական և կենտրոնական շորհրդային իշ-  
խանութեաններից և կախված: Մովորաբար այդ ձեռ-  
նարկումները հիմնվում են տնտեսական այն տեղեկնցնե-  
րի չերեան գալու վրա, վորոնց մասին խոսեցինք, տե-  
ղական աշխատանքի այն կոնկրետ վորոնումների վրա,  
վորոնք ավելի հաջող են թվում: Պարզ և, վարից բղխող  
եվոլյուցիան հարկավոր և, վորպեսզի կարելի լինի հիմ-  
նավորել վերից բղխող եվոլյուցիայի ավելի լայն ձեռ-  
նարկումները: Աշխատանքի և նրա կազմակերպման ձե-  
վերի ուսումնասիրութեանն ավելի արդյունավետ կլի-  
նի, չեթե հանրապետութեան այս կամ այն շրջանում  
կարելի լինի գտնել աշխատանքի կազմակերպման ա-  
մենարագմագան ձեւը՝ ամենահետամնացից ու նախնա-  
կանից սկսած մինչև գիտական տեխնիկայի նորագույն  
նվաճումների վրա հիմնվածները: Հասկանալի չե, վոր  
այս տեսակի գովառագիտութեան դերը հսկայական և,  
հենց գրա համար ել Պետոլլանն ու նրա տեղական մար-  
մինները գովառագիտութեանը իրենց ուշադրութեան և  
ազդեցութեան շրջանակում են դրել:

Մարդկային աշխատանքային կարողութեան հետ  
միասին ուսումնասիրվում են տեղական բնութեան հա-  
րաբերութեաններն ու ուժերը, նրանց ոգտապորձման

լեզանակները, տեղական արտադրութիւնն ու այն հասարակական չեքուսթիւնները, վորոնք կհայտնարեցին գալառի զարգացման պրոցեսում: Իհարկե, պիտի ուսումնասիրել նաև գալառի պոսենցիալ հարստութիւնները—ճահիճները, մարգագետինները, հողի ներսում գտնված հարստութիւնները, վորոնց վրա գեռ աշխատանք չի դրված: Մրան հակառակ՝ հնութիւն հուշարձանների, շինքերի ճարտարագիտական վոճի, հավատալիքների ուսումնասիրութիւնն այժմեականութիւն վրա կոթնած աշխատանքի դպրոցի գալառագիտական աշխատանքում այնքան էլ առաջնակարգ ու անհրաժեշտ խնդիրներ չեն:

Բայց աշխատանքը միայն աշխատանքի ուսումնասիրութիւնը չէ, այլև հենց ինքն՝ արտադրողական աշխատանքն է: Մենք տեսանք, վոր չեթեղալառագիտութիւնը լավ դրված լինի, իր հասարակական-կիրառման մասում կլուծի և այս խնդիրը:

Գալառագիտական աշխատանքն այսպես հասկանալով և միայն, վոր դպրոցի առաջ կարելի կլինի այժմեականութիւն ավելի կենսական ու կարևոր խնդիրներ դնել, վորպեսզի նա իվիճակի լինի կատարել իր հասարակական դերը: Յեւ պիտի նկատել, վոր շատ տեղերում, ուր դպրոցն այսպես ուղիղ և հասկացել գալառագիտութիւն նշանակութիւնը, կարողացել և ուսումնասիրել տեղական գյուղացիական տնտեսութիւններն՝ իրրև այլ ձևի արտադրողական, մասնավորապես գյուղատնտեսական ձեռնարկումներ, վորոնք մեր պայմաններում ավելի չեն տարածված և աչքի ընկնող նշանակութիւն ունեն:

Մասնագետ չեմ, ուստի և չերկար չեմ խոսիլ գյու-

դացիական տնտեսութեան ուսումնասիրութեան մասին, մանավանդ վոր այդ հարցն էլ շատ խոշորներէց է: Այս ասպարիզում առաջնակարգ հարցերէց մեկն էր դեռ 1923 թ. Լուսժողովմատի կողմից հաստատված հասարակագիտական ծրագիրն՝ ուսուցման 5-րդ տարվա համար: Հենց այս ծրագիրն էլ՝ մի փոքր կրճատված, հիմք ծառայեց այն ծրագրին, վոր 1924 թ. ուսուցիչների վերապատրաստման բազմաթիվ դասընթացները մշակեցին: Այդ ծրագիրն այսպէս ձևակերպվեց.

«Տեղական գյուղացիական տնտեսութեան» ուսումնասիրութեան ծրագիր (տես Յա. Բ. Գալլիս, Սոցիալական դաստիարակութեան աշխատավորներ վերապատրաստելու դասընթացներ): Վորոշումն հիմնական էլեմենտների, վորոնցից կազմված է տնտեսութեանը: Տնտեսութեան նպատակը: Տնտեսական պլանը: Տնտեսութեան զարգացման նպատակոր ու աննպատտ պաշտմանների (բնութեան, տնտեսական, կենցաղային) համառոտ բնորոշումը: Տնտեսութեան ուժն՝ ըստ հողի, անասունների, գործիքների, բանվորական ուժի:

Հողոգտագործման բնույթը: Սերմաշրջանառութուն, նրա առաջադրումները: Կուրուրանների բնույթը, նրանց աշխատանքի տարողութունը: Տնտեսութեան կողմնակի ճշուզերը: Բերք և նրա տատանումները: Տնտեսութեան բյուջեն. նրա դրամական և միերացին մասը. այս մասերի փոխադարձ առնչութունը: Աշխատանքային բյուջե—բանվորական ուժ և նրա ոգտագործումը. բանվորական ուժի պահանջ՝ ըստ տարվա լեզանակների: Ընտանիքի զանազան անդամների աշխատանքը: Ոժանդակ զբաղմունքներ, նրանց ծագումն ու դերը տնտեսութեան մեջ: Գյուղատնտեսութեան հետ կապ չունեցող աշխատանք դրսում և նրա դերը:

Այսպիսի ծրագրով աշխատանքը կարող է չերեք տեսակ բարգուժչան հասնել.

1. Ուսումնասիրում են վարկե առանձին գյուղական տնտեսություն, 2. Ընտրում են տարրեր տիպի առանձին գյուղացիական ընտանիքներ—հարուստ, միջակ և չքավոր, և 3. գյուղի ընտանիքները կարգ-կարգ ուսումնասիրվելով (կամ, չեթե մեծ գյուղ է, նրա մի մասն), ամբողջ գյուղի տնտեսության մասին ընդհանուր չեզրակացություն են տալիս: Տալիցկի (Մոսկվայի նահանգ) առաջին աստիճանի դպրոցում գյուղացիական տնտեսության ուսումնասիրություն համար ընդունված է հետևյալ սխեման—սպարակ, աչքի և բանջարանոց, շենքեր (գնահատություն), տան կահույք, բակի և գյուղատնտեսական մեռյալ կահույք, տնասուններ և մեղվանոց, տնվորները, շնչապատկան հող, անասունների կերի հաշվեգումար՝ ամիսներով և ըստ անասունների տեսակի, կովերի կիթը. տվյալ տնտեսության հավքերը, տվյալ տնտեսության գրամագլուխները, այս բոլորի չեզրակացությունը— «Մեր գյուղացիական տընտեսությունը» ժողովածուն: Հարկավ, բացի գյուղացիական տնտեսությունն ուսումնասիրելուց, կարելի չե ուսումնասիրել նաև գյուղատնտեսական արտադրության ուրիշ ձևեր ևս—կոլլեկտիվ տնտեսություն, խորհրդային տնտեսություն և այլն: Բայց հաճախ դպրոցն ուսումնասիրում է նաև տնայնագործությունը, արհեստագործարանը, փոխադրական միջոցը: Ուսումնասիրվում է նաև «գյուղն ու քաղաքն՝ իրենց փոխհարաբերություններով» ընդհանուր թեման: Այս կամ այն նշութի շոշափումը կախված է ուսուցման տարուց, դպրոցի աստիճանից, նրա միջոցներից և շրջապատող հանգամանքներից:

Այս կամ այն արտադրութի տնտեսական ուսում-  
նասիրութիւնը, այսինքն, ըստ մեր ծրագրի՝ գաղափա-  
ղիտական աշխատանքի կողմերից մեկը, մեր դպրոցում  
գերազանցօրէն լաջն կերպով և ծափարկիբ: Նույնը չի  
կարելի ասել բնութիւնն բաժնի մասին, վորն, անշուշտ,  
նեղհայտն մոշ միայն չեղկրորդական տեղ և բռնում,  
այլ կարելի չե ասել մոտացված և: Թե ինչն մեղնում  
զանազան տեղերի բնագիտական անհրաժեշտ հետազո-  
տում չի կատարվում, զրտ պատճառները շատ ևն: Ձի  
կարելի անտեսել մեղնում բնագաղափական գիտելիքնե-  
րի սակավ տարածված լինելը, բնութիւնն ուսումնա-  
սիրող ձեռնհաս մարդկանց պակասը: Այդ անպատրաս-  
տութիւնը պատմականորեն և առաջ չեկել: Յեթե Են-  
գելսի ասելով՝ Մարքսն ուշագրութեամբ հետեկ և բնա-  
գիտութեան բնագաղափարում տեղի ունեցող չուրաքան-  
չչոր չեղելովի, նույնը չի կարելի ասել մեր ինտելլի-  
գենտ հասարակութեան մասին, չեթե նույնիսկ նա պատ-  
կանելու լիներ Մարքսի կողմնակիցների թվին: Ուսուց-  
չական աշխարհում միայն բնագիտութեան ուսուցիչն եր  
շատից-քչից ճանաչում բնութիւնը. թեպետ հաճախ  
նա չեկ եր անձեռնհաս լինում՝ ինքնուրույն կերպով  
տանելու բնութեան գիտողութեանները: Առաջին աս-  
տիճանի դպրոցի ուսուցչութեանը բնագիտական աս-  
պարիզում խղճուկ, նույնիսկ սխալ տեղեկութեաններ  
ուներ և ունի, ունեցածն ևլ համարյա միշտ միայն գրքի  
տեղեկութեաններ են չեղել:

Մեր ինտելլիգենտ շրջաններում առաջվա նման գո-  
չութեան ունի սեր դեպի գիրքը, բացառապես գեպի  
բանավոր մարդանքները, գեղեցիկ գրականութեանն ու

արվեստները: Այդ սերը ժառանգաբար մնացել է նախ-  
կին ազնվական-աղաչական խավերից, վորոնցից որի-  
նակ առավ նախ՝ խոշոր, ապա նաև մանր բուրժուա-  
զիան: Իսկ հեղափոխական աչնպիսի մոմենտներում,  
ինչպիսիք այժմ են, հասարակական և քաղաքական  
խնդիրներին և հսկայական սեղ տրվում. և այս միան-  
գամայն հասկանալի չե: Սակայն քաղաքական շար-  
ժումից ու տնտեսական հարաբերությունների թա-  
փից բղխում է, մոտ ապագայում ել հուժկու հոսան-  
քով հետաքրքրություն և դարգանալու դեպի տնտե-  
սական պրոցեսի տեխնիկան, վոր իր հիմքում, նույն-  
իսկ մանրամասնություններում, ինքը բնագիտությունն  
և: Մարդկություն հենց իրեն մեջ մշտապես կատա-  
րած պրպտումից, լինեն այդ չերևույթները կենցա-  
ղային—արտացոլած գրականության մեջ, թե մարդ-  
կանց փոխհարաբերությունների—արտացոլած եկոնո-  
միկայում, ցանկություն և առաջ գալիս մանրազննին  
ուսումնասիրությունը լրացնել բնություն, նրա պաշ-  
մանների, որենքների, հնարավորությունների ուսում-  
նասիրությունը: Պիտի նկատել, վոր թե անցյալում,  
թե ներկայում, թե նշած գալիք որերում դեպի բնա-  
գիտությունն առաջացած հետաքրքրության ժամանակ  
միշտ մեկնում գրեկորվում և բնությունն ուսումնա-  
սիրելու ակադեմիկ կերպով գիտական բնույթ ունեցող  
աշխատանքի փաստը: Մեզնում բնությունն ուսումնա-  
սիրությունն ըստ մեծի մասին աչնպես և դրված, վոր  
չի պատասխանում ազգարնակության մասսաչի առա-  
ջադրած հարցերին: Այդ մասսան վոչ թե մաքուր գի-  
տելիքներ և պահանջում՝ գիտեցած լինելու համար,  
այլ տնտեսական կշանքի, կոնկրետ չերևույթների ու-

ուսմնասիրութիւնն, աչնպիսի կյանքի, վորի նպատակները տարզ են ու հասկանալի: Նա պահանջում է կյանքում անմիջապէս կիրառելի գիտելիքներ:

Այս նկատառումներն էլ բնորոշում են աչն բնագիտական—գալաուագիտական աշխատանքը, վոր մեր դպրոցը պիտի տանի: Ներկայումս խաղառ պիտի հրաժարվել գալաուի բարդ ու համաչնապարփակ ուսումնասիրութիւնից, ինչպէս, որինակ, նրա կենդանական, բուսական աշխարհների ամբողջական ուսումնասիրութիւնից, վոր պահանջում է մի շարք տարիների, գերազանցորեն վարակչալ մասնագետների գիտական մեծ ճշտութիւնն պահանջող, զուտ ակադեմիկ աշխատանք, վորի կենսական արժեքը մեկեն չի չերևում, մեկեն չի արտահայտվում: Համաձայնենք, վոր գեպի մաքուր գիտութիւնն ունեցած նախկին ազայական վերաբերմունքի շարունակութիւնն է այդ, վոր անփոփոխ անցել է բարձրորակ ինտելլիգենցիային. առորչա կյանքի առաջադրած խնդիրներից, աշխատավորների կյանքից մեծամտորեն հեռանալ է նշանակում այդ, ուստի է անթուլլատելի չէ աշխատավորական դպրոցի համար, վոր ամբողջապէս այժմեյականութեամբ ու առորչա կյանքով է ապրում: Աշխատանքի դպրոցը գալաուի բնական առանձնահատկութիւններն ուսումնասիրելու աչնպիսի ուղիներ պիտի բանա, վորոնք է բալական հեշտ, է ուժերից վեր չլինեն է արագ մոտեցնեն նպատակին, աչն է՝ տեղական տնտեսութեան բարգալաւմանը: Այս մեթոդը բնորական մեթոդն է, վոր կարելի չէ հակադրել ամբողջական գիտական հետազոտման մեթոդին: Մնարդար կլինի, չեթե մենք բնորական մեթոդը գիտական չհամարենք: Այս մեթո-

զի գիտակամ: լինելը բավականապէս իրականացած  
կլինի, չեթե նա գիտական ճշտութիւնն ունենա, կարող  
անա բավարարել զեպի առաջադրումներն ու չեղրա-  
կացութիւնն ունեցած քննադատական վերաբերմունքի  
պահանջները, չեթե նա բավարար չափով որչեկտիով լինի:  
Յեթե մենք չսկսենք բոլորովին լրիվ ուսումնասիրել մեր  
գավառի անտառներն՝ իրենց բոլոր բարդութիւններով,  
այլ հետադասենք այնպես, ինչպէս սովորաբար կատար-  
վում է անտառարուծութեան մեջ, այսինքն՝ ընտրենք ան-  
տառի կշանքի ամբողջ կոմպլեքսն ընդգրկող բազմա-  
կողմանի հարցերից ավելի ուշագրամներէց մի քանիսն,  
այդ գեպքում այգպիսի ընտրական գավառագիտական  
հետադատութիւնն ել է կատարելապէս գիտական կը-  
լինի, և գպրոցի ուժին ու տեղական պահանջներին  
համապատասխան, մանավանդ չեթե հարցերն ընտրել  
կարողանանք: Այս մեթոդն իր մեջ պարունակում է  
գավառագիտական գպրոցական աշխատանքի միայն  
մի կողմը: Մշուս կողմից, գպրոցը պիտի պարզ ու  
հեշտ ուսումնասիրի հենց տեղական անտառը, մարգա-  
պետինները, հողը և այլն. իսկ անտառը, մարգագետին-  
ները, հողը չուսումնասիրելը, իհարկէ, գործնակա-  
նում նուցնը չէ: Այն ժամանակ, չերը մարգագետնի,  
անտառի ու հողի մասին ընդհանուր գիտելիքներ  
գրքերից ել կարելի չէ ձեռք բերել, տեղական բնա-  
կան որչեկաների և նրանց առանձնահատկութիւնների  
մասին գիտելիքներ կարելի չէ ձեռք բերել միայն և  
միայն տեղն ու տեղը ուսումնասիրելով նրանց: Բայց  
ուսումնասիրելիս պիտի կարողանալ այդ հարցերն ի-  
րար հետ կապակցել, վորպէսզի պարզ լինեն նրանց  
փոխհարաբերութիւնները. իսկ այդ հեշտ և միայն այն

դեպքում, չեթե նրանց վերցնենք վորպես գավառի առանձնակի արտադրող ուժեր: Բացի՞ դրանից, ինչպես վերն ել վորոշվեց, այսպիսի ուսումնասիրութիւնն պիտի կատարել միայն բոլոր այս բնապատմական որչեկաների և հողերի տնտեսական կիրառման, պիտանիութեան և արտադրիչ առանձնահատկութիւնների ֆոնի վրա: Հետեւաբար՝ այս բնական-գիտական ուսումնասիրութիւնը միանգամայն աննկատելի կերպով դառնում և տվյալ գավառի կյանքի տնտեսական, հասարակական և քաղաքական հարցերի ուսումնասիրութիւնն:

Այս սկզբունքները կիրառելով, չես ստացա գալլոցի արտադրողական գավառագիտական աշխատանքի ստորև առաջ բերած սխեման (եջ 28), վոր մշակել եմ՝ նկատի ունենալով միայն գյուղատնտեսական արտադրողականութիւնը:

Աշխատանքի հիմք կազմում և, ընդհանրապես, մարդկանց արտադրողական-աշխատանքային գործունեութեան ուսումնասիրութիւնը: Մարդկանց այգալիսի աշխատանքի կոմպլեքսից մենք կերտում ենք մի գյուղատնտեսական արտադրողականութիւն, իսկ այս վերջինից՝ նրա մի վորեւե ձևը, որինակ՝ գյուղացիական տնտեսութիւնը: Կանգ առնելով այս թեմայի, տեղական գավառի գյուղացիական տնտեսութեան վրա, մենք այն ուսումնասիրում ենք չերեք տեսակետից.— 1. տնտեսութեան բնուկան պայմաններ, 2. արտադրողատեխնիկական և 3. սոցիալ-տնտեսական պայմաններ: Բաց այս պայմանների, ինչպես նաև նրանց ստորաբաժանումների ուսումնասիրութիւնը իրարից անջատ չի կատարվում, այլ ընդհակառակն՝ ներքուստ փոխադարձորեն կապակցված: Այս աշխատանքն ամ-

Ս Խ Ե Մ Ա.

դպրոցի արտադրողական գալխաւագիտության  
 ա շ խ ա ս ա ն ֆ ի

Մարդկանց արտա-  
 գրողա- աշխատան-  
 քային դարձունե-  
 յությունը.

Գյուղ - անտ. արտադրանքի ձեւերն ու նրանց պայմանները.

Սոց. անտ. պայմանների ուսումնասիր.	Արտադրողա-տեխ-նիկ. պայմանների ուսումնասիրութ.	Բնական պայմանների ուսումնասիրությունը.	
<p>Կապ շուկայի հետ.</p> <p>Հողագագործման և հողաշինարարական խնդիրներ.</p> <p>Արտադրողական տեխնիկայի մակերեսը.</p> <p>Ագրարային բարականություն.</p> <p>Խորհրդային էշխանություն և Բ. Կ. Կ. և այլն</p>	<p>1 Հողատեսքեր. 8, 9, 10, 11</p> <p>2 Կուլտուրաներ. 9, 10</p> <p>3 Սերմաշրջանառություն. 9, 10, 13</p> <p>4 Կենդանաբուծություն. 8, 11, 13</p> <p>5 Կենդանի և մեռյալ ինփինտաբ. 9, 10,</p> <p>6 Ոժանդակ գրագմունք. 9, 10, 11, 12, 13</p> <p>7 Բանփորականութ. 9, 13</p>	<p>8 Բեւեֆ. 1, 4</p> <p>9 Կլիմա և զոոսզումն. 1, 2, 3, 5, 6, 7</p> <p>10 Հող և ընդերք. 1, 2, 3, 5, 6</p> <p>11 Բուսական համախմբակցություն. 1, 4, 6</p> <p>12 Կենդանական աշխարհ. 6</p> <p>13 Ազգաբնակչություն 3, 4, 6, 7</p>	
	<p>Գափառի արտադրողական ուժերի վերելքը.</p>		

բողջանում է մեր գաղափարապետական ուժերը բարձրացնելու համար սարած աշխատանքը պլանավորելով և կյանքում իրականացնելով: Այսպես է դրսևորուցի սխեմայի և աշխատանքի ընդհանուր պլանը՝ արտադրողական գաղափարաբանության գծած ընազավառում: Հողվածներից յուրաքանչյուրը մի շարք ստորաբաժանումներ ունի. որինակ՝ բնության պաշտանների ուսումնասիրությունը բաժանվում է՝ սեյնեֆի, հողի ընդերքի, կլիմայի, վոսոգման, հողի, բույսերի համախըմբման, կենդանական աշխարհի, մարդկային բնակչության:

Արտադրողատեխնիկական պաշտաններն էլ իրենց հերթին բաժանվում են՝ հողատեսքեր\*, կուլտուրական բույսեր, սերմաշրջանառություն, անասնաբուժություն, մեուլալ և կենդանի ինվինտար, սժանդակ զբաղմունք, բանվորական ուժ և նրա բաժանումն՝ ըստ սեզոնների: Սոցիալ-տնտեսական պաշտանների բաժինը չես հատուկ ուսումնասիրության չեմ չենթարկել, նրա հիմնական մասնատները թված են սխեմայում:

Բնության բոլոր չերեւթները մի հիմնական, հատկապես աշխարհագրական գրության ֆունկցիաներն են. նա չե վորոշողը, նրանից էլ կախված են, բացի, իհարկե, չերկրի «ընդերքից»: Բոլոր արտադրողատեխնիկական պաշտանները կապակցողը դչուղա-տնտեսական արտադրողականության կազմակերպման խընդիրն է: Հետագայում չես կնչեմ արտադրողականության ընական և արտադրողատեխնիկական պաշտանների մեջ չեղած կապի վորոշ ուղիներ, վորոնք

\* УГОДЬЕ — հողատեսք այսպես է ընդունել մեր պետական-խարանը — Ծ. Թ.:

կարելի չե վորպես գավառադիրտական աշխատանքի առանձին թեմաներ ընդունել՝ ընտրողական մեթոդով: Սխեմայում այս թեմաները (1—13) ցույց են տրված վորոշ գործոններ միացնող թվանշաններով (վանդակիկների աջակողմի փոքր թվերը ցույց են տալիս ամեն մի վանդակիկի կապը մշտաների հետ):

